

ՀԻՆ ՎԻՃԱԿԱԳԻՐ ՄԸ

ՅԵՂԵՐՈՒ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒ. ԱՆՈՆՅ ԸՆԴՀ. ԹԻԻԸ

Կարևոր համարեցինք նախ նկատի ունենալ Քիւրդերու 1860ի վիճակագիրը, իրենց ցեղերու, բնակավայրի և ընդհ. թուի մասին գաղափար մը տալու ու նորերու հետ բաղդա-տութեան դնելու համար:

Քաղած ենք «Receuil de Notices et Récits Kurdes» P. J. A. Lerch-էն:

Այս վիճակագրի մէջն է զայն կազմող քիւրդ Մահմուտ էֆ.ի յայտարարութիւնը՝ որը մենք գծած ենք կարեւոր յիշատակութիւն մը անուանով. թէ Հայաստանի մէջ բնիկ Քիւրդեր չեն եղած՝ և բոլորը եկած են Տիարպէքիւրէն. այնտեղը՝ ամեն մէկը թողնելով իր բոյնը:

Սիպկան ցեղը. — Հետեւեալ գաղղիւէները կը կազմեն այս աշիրաթը. — Սիպկի, Կիլիբի (Նդիտի), Պիրնի, Մօնիկի, Միխայիլի: 770 տուն:

Զիլան ցեղը. — Հետեւեալ թայիֆէները կը կազմեն այս աշիրաթը (Պայաղիտի շրջանը. կը թափառին երբեմն Պարսկաստան և Երեւանի սահմանները) — Զիլի, Քիտիքի, Տիլքիբի, Գէլտուրի, Սէվիտի, Փիրէխալի, Կուրտիկի, Տէմատտինի, Տէլիքի, Մամգիտի: 1450 տուն:

Հայսարան. Պայաղիտի մօտիկ. (կը թափառին երբեմն Վանի և Արճէշի սահմանները ու երբեմն Պարսկաստան, ունին 2000 վրան):

— Սայտէ-Հէյտէրի, Հէմտիքի, Ատէմի, Լայթէքի, Մայլր-Խուրան, Միլլի. Մըզլիլի. 1950 տուն:

Որոշ բնակութեամբ առանձնացած թայիֆէներ՝ հաստատուած Պայաղիտի, Տիատինի, Խամուրի, Ալաշկերտի և կամ Պայաղիտի գաղաներու մէջ:

— Հիւվէրքի, Գիւրան, Գարատիլտիզ, Տէրէտէքի, Փինեա-նիսի, Խալէսինի, Մայնիքի, Մամգիտի. (Պայաղիտ քաղաքին մէջ) 270 տուն: Իսկ միւս ցեղերը՝ Կէլթուրի, Տէրէտէքի,